ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Մարտունի,Շահումյան,2, Հեռ. 0262-40005

N 1207
09 դեկտեմբերի 2011թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ն. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պողոսյան.

Ուղարկվում է Մարտունի համայնքի ավագանու 09.12. 2011թ. կայացած թիվ 10 նիստի հաստատված արձանագրությունը, 10 թերթի վրա:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խ. ԽԼՂԱԹՅԱՆ
4-11-56

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան
ՄՈՒՏՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ
20 12 2011թ.
7005-11

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ - 10

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 09-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2011 Թ. ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ:
Նիստին մասնակցում էին համայնքի 11 ավագանիներից 8-ը՝ Ռ.ԴԱՎԹՅԱՆ, Խ. ԴԱՎԹՅԱՆ, Ա. ՍՈՍՈՅԱՆ, Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ՋԻՐՈՅԱՆ, Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ, Մ. ՍՈՂՈՅԱՆ:
Նիստը վարում էր քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Քարտուղարությամբ՝ Խ. ԽԼՂԱԹՅԱՆԻ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՀԱՐՑ - 115. «Զոլաքար գյուղի բնակիչ Սերգո Ղազարյանին, Մարտունի քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում տալու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ - 116. «Մարտունի քաղաքի Մամիկոնյան, Թումանյան և Գետափնյա 2 փողոցների, հետագա օգտագործման համար ոչ պիտանի ջերմագծի խողովակները ապամոնտաժելու և օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ - 117. «Մարտունի համայնքի 2011թ. բյուջեում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ - 118. «Մարտունի քաղաքի Գ. Նժդեհ փողոցի 2/1 հասցեում ինքնակամ կառուցված շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ - 119. « <<Ռեդինետ>> ՓԲԸ-ին <<VIVACELL-MTC>>-ի պատվերով օպտիկամանրաթելային մալուխի անցկացման նպատակով քաղաքի գիշերային էլեկտրալուսավորության հենասյունները վարձակալությամբ տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ - 120. «Մարտունի համայնքի տարածքում 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը (Ն):

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ - 121. «Մարտունի համայնքի ղեկավար Բագրատ Հարությունյանին խրախուսելու նպատակով ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ- 122. «Դիմումների քննարկում»:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՍՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Է. ԴՐԲԻՆՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 115
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«09»-ը դեկտեմբերի 2011թ. գ. Մարտունի

«Զոլաքար գյուղի բնակիչ Սերգո Ղազարյանին, Մարտունի քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հաշվի առնելով Սերգո Ղազարյանի աշխատանքային գործնեության ընթացքում կատարած ծառայությունները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

Համաձայնություն տալ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի բնակիչ Սերգո Ղազարյանին, աշխատանքային գործնեության ընթացքում ժողովրդին մատուցած ծառայությունների համար, շնորհել Մարտունի քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 0, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 1 ---------- Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Է. ԴՐԲԻՆՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 116
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«09»-ը դեկտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի քաղաքի Մամիկոնյան, Թումանյան և Գետափնյա 2 փողոցների, հետագա օգտագործման համար ոչ պիտանի ջերմագծի խողովակները ապամոնտաժելու և օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Նկատի ունենալով, որ Մարտունի քաղաքի Մամիկոնյան, Թումանյան և Գետափնյա 2 փողոցների ջերմագծի խողովակաշարը հետագա օգտագործման համար պիտանի չէ և ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ, Մարտունի քաղաքի Մամիկոնյան, Թումանյան և Գետափնյա 2 փողոցների ջերմագծի խողովակաշարը ապամոնտաժել և խողովակները օտարել աճուրդ վաճառքի կարգով:

2. Խողովակաշարի ապամոնտաժումը իրականացնել աճուրդում հաղթող կազմակերպության կամ ֆիզիկական անձի ուժերով և ֆինանսական միջոցներով, նկատի ունենալով կատարված ծախսերը խողովակների շուկայական գինը որոշելու ժամանակ:

3. Խողովակների շուկայական գինը որոշելու նպատակով, ծառայության գնումը կատարել լիցենզավորված մասնագիտական կազմակերպություն <<Կոունկ>> ՍՊԸ-ից, նրանից պահանջելով գինը որոշել տվյալ պահի շուկայական գնից ապամոնտաժման ծախսերը հանելու միջոցով:

4. Սույն որոշման ընդունմամբ ուժը կորցրած համարել Մարտունի համայնքի ավագանու 06.09.2011թ. N 96 որոշումը:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Է. ԴՐԲԻՆՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 117
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«09»-ը դեկտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի 2011թ. բյուջեում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3- րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի եկամուտները ավելացնել 750 000 (յոթ հարյուր հիսուն հազար) դրամի չափով՝ «Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» հոդվածում:
2. Ավելացած եկամուտի հաշվին, «Գյուղատնտեսություն» նախահաշվի (բաժին 04, խումբ 2, դաս 1) 4111 հոդվածում ավելացնել 600000 (վեց հարյուր հազար) դրամ, 4131 հոդված՝ -150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ, քաղաքի անասնաբույժների աշխատավարձը վճարելու համար:
3. Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> նախահաշվի 4237 հոդվածից 300000 (երեք հարյուր հազար) դրամ տեղափոխել <<Հիմնական ընդհանուր կրթություն>> (բաժին 09, խումբ 2, դաս1) նախահաշվի 4267 հոդված <<Հայ Ասպետ>> հեռուստախաղի հաղթող, Մարտունի քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմի անդամներին խրախուսելու նպատակով, նվերներ ձեռք բերելու համար:
4. Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> նախահաշվի 4269 հոդվածից 1400000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ և 4267 հոդվածից 680000 (վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ տեղափոխել <<Այլ մշակութային ծառայություններ>> (բաժին 8, խումբ 2, դաս 4) նախահաշվի 4267 հոդված Նոր տարվա, տոնակատարությունները կազմակերպելու և անցկացնելու, տոնածառ տեղադրելու և զարդարելու, խաղալիքներ և հրավառության պարագաներ, նվերներ ձեռք բերելու համար:
5.Մարտունի համայնքի 2011թ.բյուջեի <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> նախահաշվի 4269 հոդվածից 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել Մարտունու մարզադպրոցի 2011թ.նախահաշվի 4221հոդված,գործուղման ծախսերը վճարելու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ռ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՍՈՍՈՅԱՆ
Ա. ՁԻՐՈՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Է. ԴՐԲԻՆՅԱՆ
Ս. ՍՈՂՈՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 118
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«09»-ը դեկտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի քաղաքի Գ. Նժդեհ փողոցի 2/1 հասցեում ինքնակամ կառուցված շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ պարբերության, ՀՀ Կառավարության 18.05.2006թ N 912-Ն որոշման պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ, Մարտունի քաղաքի Գ. Նժդեհ փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող, ինքնակամ կառուցված շինությունը ճանաչել Մարտունի համայնքի սեփականություն և մուտքագրել քաղաքապետարանի հաշվեկշիռ:

2. Մարտունի համայնքի սեփականություն ճանաչված գույքի սեփականության իրավունքի վկայականի ձեռք բերելու նպատակով, համայնքի 2011թ. բյուջեի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 4241 հոդվածից 10000 (տասը հազար) ՀՀ դրամ վճարել ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կադաստրի Մարտունու ստորաբաժանմանը գույքի սեփականության իրավունքի վկայական ստանալու համար:

3. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ քաղաքապետարանի հաշվեկշիռ մուտքագրված գույքը օրինականացնելու, օտարելու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Է. ԴՐԲԻՆՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 119
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«09»-ը դեկտեմբերի 2011թ. գ. Մարտունի

« <<Ռեդինետ>> ՓԲԸ-ին <<VIVACELL-MTC>>-ի պատվերով օպտիկամանրաթելային մալուխի անցկացման նպատակով քաղաքի գիշերային էլեկտրալուսավորության հենասյունները վարձակալությամբ տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով <<Ռեդինետ>> ՓԲԸ-ի 21.11.2011թ. N RN-322/11 գությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով,

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ, Մարտունի քաղաքի հյուրանոցից մինչև <<Առէքսիմ>> բանկ ընկած տարածքի գիշերային լուսավորության 26 էլեկտրահենասյուները վարձակալությամբ տրամադրել <<Ռեդինետ>> ՓԲԸ-ին հինգը տարի ժամկետով, 6300 (վեց հազար երեք հարյուր) դրամ տարեկան վարձավճարով (այդ թվում՝ ավելացած արժեքի հարկը), ըստ կից ներկայացվող հատակագծի:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Է. ԴՐԲԻՆՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 120
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«09»-ը դեկտեմբերի 2011թ.

ք. Մարտունի

«Մարտունի համայնքի տարածքում 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը (Ն):

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի տարածքում 2012թ. համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը (կից ներկայացվում է):

2. ՈՒժը կորցրած համարել Մարտունի համայնքի տարածքում 2011թ. ընթացքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին Մարտունի համայնքի ավագանու 14.01.2011թ. թիվ 1 նիստի թիվ 1 որոշումը:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Է. ԴՐԲԻՆՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 121
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«09»-ը դեկտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի ղեկավար Բագրատ Հարությունյանին խրախուսելու նպատակով, ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հաշվի առնելով Մարտունի համայնքի ղեկավարի Բագրատ Հարությունյանի կողմից իր պարտականությունները բարեխիղճ կատարումը, 2011թ. բյուջեի կատարողականի բարձր ցուցանիշները և ղեկավարվելով «ՀՀ Աշխատանքային օրենսգրքի» 219-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի ղեկավար Բագրատ Հարությունյանին վճարել միանվագ դրամական պարգևատրում, ամսական դրույքի չափով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Գ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Է. ԴՐԲԻՆՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 122
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«09»-ը դեկտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Դիմումների քննարկում»:

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

Մարտունի քաղաքի ներքոնշված քաղաքացիներին սահմանել գույքահարկի գծով արտոնություն (տույժերի գիջում).

h/h	ազգանուն, անուն, հայրանուն	գումարը (դրամ)	Սոց. քարտի համարը
1	Դավթյան Արծրուն	28900	2002670343

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Է. ԴՐԲԻՆՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ